

ՀՄՀ-Հայաստան ծրագրի 2007-2008թթ գումարման Շահառուների խորհրդի

Եզրափակիչ նիստ

ՀՄՀ-Հայաստանի հայտարարությունը

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը (ՇԽ) ամփոփեց իր գործունեության ևս մեկ տարին: Խորհրդի ներկա կազմը, որը երկրորդն է ծրագրի մեկնարկից ի վեր, ընտրվել էր 2007 թվականի սեպտեմբերի 29-ին: Այսօր ՇԽ անդամները կգեկուցեն անցած մեկ տարում իրենց գործունեության և ձեռքբերումների մասին: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի անունից, ես կցանկանայի երախտագիտություն հայտնել ՇԽ անդամներին անցած մեկ տարում ի շահ ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրենց ունեցած անձնական և մասնագիտական ներդրումների համար:

Անցած տարին մեզ համար չառանձնացավ իր դյուրինությամբ և պատճառներից մեկն այն էր, որ մենք պարտավոր էինք կենտրոնանալ խիստ կարևոր մի փուլի՝ շինարարության նախագծման և նախապատրաստման վրա, ինչը շատ կարևոր է շինարարության մեկնարկից առաջ ծրագրի Կառավարման մարմիններին և լայն հանրությանը ներկայացման տեսանկյունից: Երկրորդ, ինչպես Հայաստանում բնակվող յուրաքանչյուր անձ, մենք նույնպես ստիպված էինք անցնել վերջին ամիսների քաղաքական իրադարձությունների միջով, որոնք չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ ծրագրի ընթացքի վրա: Շահառուների խորհրդի անդամները երբեմն ստիպված էին լինում հավասարակշռել իրենց դիրքորոշումները՝ որպես ՇԽ անդամ և որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ: ՀՄՀ-Հայաստանի թիմը, կիսում է ինչպես ՇԽ ձեռքբերումները, այնպես էլ դժվարությունները և դասեր ենք քաղում այդ ամենից: Մենք աշխատել ենք իբրև մեկ թիմ, որը գուցե հասարակական հայացքների տեսանկյունից այնքան էլ միակարծիք չէր, սակայն միահամուռ էր ՀՄՀ-Հայաստան ծրագրին ի շահ ուղղված ջանքերի տեսանկյունից:

Ինչպես ցանկացած այլ բնագավառում, այստեղ էլ առանցքային դերակատարում ունի մի այնպիսի բաղադրիչ, ինչպիսին է «ուսուցման կորը», որը ծրագրի գործընթացների հետ զուգահեռ մանրամասն և շարունակական ուսումնասիրման կարիք ունի: Մենք՝

Այսօր լավ առիթ է, որպեսզի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը համառոտ անդրադառնա ծրագրի առաջընթացի ցուցանիշներին: Անցած երկու տարվա ընթացքում ՀՄՀ-Հայաստանը շարունակել է ծրագրի անխափան իրագործումը: 2008թ-ի օգոստոսին մենք շահագործման հանձնեցինք չորս համայնքներում կառուցված ներտնտեսային ոռոգման ցանցերը. Արարատում՝ Աբովյան, Արևշատ, Լանջազատ, Արմավիրում՝ Գրիբոյեդով համայնքներում – ընդհանուրը 4,5 կիլոմետր երկարությամբ, որոնք պետք է ծառայեն նշված համայնքների բնակիչների ոռոգման կարիքների բավարարմանը: 2008թ-ի վերջում ՀՄՀ-Հայաստանը լիովին պատրաստ կլինի ազդարարելու շինարարական մեծ փաթեթի սկիզբը, որը կմեկնարկի հաջորդ տարի, երբ ամբողջությամբ պատրաստ կլինեն ոռոգման և ճանապարհների նախագծերը: Գյուղական ճանապարհների մասով, 2008թ-ի դեկտեմբերին մենք լիովին կավարտենք Արմավիր-Իսահակյան-Գյումրի ճանապարհի Գետափ-Աղին 24.5 կիլոմետրանոց հատվածի վերականգնումը: Հայաստանի կառավարության օժանդակությամբ և համաֆինանսավորմամբ, ՀՄՀ-Հայաստանը ստորագրեց շուրջ 300 կիլոմետր գյուղական նշանակության ճանապարհների վերականգնման պայմանագրերը և ազդարարեց դրանց մեկնարկը: Շինարարական այս փաթեթի ընդհանուր արժեքն է շուրջ 50 միլիոն ԱՄՆ դոլար և ընդգրկում է Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերը:

Ավանդաբար ՇԽ-ն մեծ ուշադրության է արժանացնում Ջրից դեպի Շուկա բաղադրիչը: Այն մոտ է գյուղատնտեսության ոլորտում տարիներ շարունակ աշխատող մասնագետներին, որոնց թիվը այս գումարման խորհրդի կազմում բավականին մեծ է: Ջրից դեպի Շուկա բաղադրիչն անմիջականորեն աշխատում է ՀՄՀ-Հայաստանի շահառու ֆերմերների հետ: Այստեղ ևս մենք նվաճումներ ունենք. «Արդյունավետ ոռոգում» և «Բարձրարժեք գյուղատնտեսություն» թեմաներով վերապատրաստվել է 18.000 ֆերմեր: Ծրագիրն իրականացնող ԷյՍիԴ-ի Այ/ՎՕԿԱ կազմակերպությունը 52 ցուցադրական տնտեսություն է հիմնել, որտեղ գործնականում կիրառվում են ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաները և գյուղատնտեսական արտադրության նորամուծությունները: Ավելին՝ ամենահամարձակ ֆերմերներին աջակցելու նպատակով ՀՄՀ-Հայաստանը սկսեց է իր վարկային ծրագիրը, որի միջոցով ՋԴԾ գործողություններին մասնակցող ֆերմերներին տրվում են ցածր տոկոսադրույքով վարկեր: Առ այսօր արդեն ունենք ավելի քան 100 վարկառու, իսկ վարկային փաթեթը հասնում է 1 միլիոն ԱՄՆ դոլարի:

Շնորհակալություն ենք հայտնում ՇԽ այն անդամներին, ովքեր, մեզ հետ միասին այցելում էին մարզեր և հետևում իրականացվող վերապատրաստման դասընթացներին, ծանոթանում ցուցադրական տնտեսություններում ու վարկային բաղադրիչի շրջանակներում տարվող աշխատանքներին:

Այդուհանդերձ, ՀՄՀ-Հայաստանն ունի նաև որոշակի խնդիրներ: Միջպետական Համաձայնագրում ամրագրված արտարժույթը՝ ԱՄՆ դոլարը, արժեզրկվել է, դրա հետ մեկտեղ կտրուկ աճել են շինանյութերի գները, ինչը հանգեցրել է նախապես հայտարարված աշխատանքների ծավալների կրճատման: Մենք, ՀՄԿ-ի հետ համատեղ, ձեռնարկել ենք ամեն հնարավորը, նվազագույնի հասցնելու այդ կրճատումների ազդեցությունը ծրագրի թիրախի՝ գյուղական աղքատության կրճատման վրա: Ծրագրի Կառավարման խորհուրդը բազմիցս նշել է, որ ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կարևորությունը առաջնային է պետության համար և որ անհրաժեշտության դեպքում իր սեփական միջոցները կուղղի իրականացնելու նախապես ծրագրված աշխատանքները: Դրա լավ օրինակ է հանդիսանում այն, որ վերջերս Հայաստանի Հանրապետության կառավարությունը 16,8 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է հատկացրել Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի առաջին փաթեթի շինարարության մեկնարկի համար: Այդուհանդերձ, ծրագրի թիմը և գործընկեր կազմակերպությունները, ինչպես նաև ՇԽ անդամները, պետք է կրկնապատկեն իրենց ջանքերը կրճատված ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական նոր աղբյուրների հայթայթման ուղղությամբ:

ՀՄՀ-Հայաստանը գործնականում հիանալի հնարավորություններ է ընձեռում շահառուներին և լայն հանրությանը մասնակցելու և հետևելու ծրագրի իրականացմանը: Շահառուների խորհուրդը հատկապես ծառայում է այդ նպատակին և հանդիսանում է այն վառ օրինակը, թե ինչպես է հասարակությունը գործնականում մասնակցում որոշումների կայացման, իրագործման և վերահսկման գործընթացներին:

Քանի որ մենք մոտենում ենք ՇԽ հաջորդ կազմի ընտրությունների օրվան՝ սեպտեմբերի 27-ին, հուսով ենք, որ քաղաքացիական հասարակությունը սովորականի պես մեծ ոգևորություն կցուցաբերի այդ հարցում: Վերջերս ձևավորված ընտրական հանձնաժողովը արդյունավետ է աշխատում է և բազմաթիվ հայտեր է ստանում ընտրություններին մասնակցել ցանկացող կազմակերպություններից: Մենք ակնկալում ենք ընտրություններին ակտիվ մասնակցություն, սակայն տեսնում ենք, որ որոշ կազմակերպություններ այս տարի որոշել են չմասնակցել այս

գործընթացին: Նրանց թվում են մեր այնպիսի գործընկերներ, ում հետ աշխատել ենք 2 տարի՝ ի շահ ՀՄՀ-Հայաստան ծրագրի: Յուրաքանչյուր կազմակերպություն ինքն է որոշում ՇԽ ընտրություններին մասնակցել-չմասնակցելու հարցը, սակայն, ես համոզված եմ, որ նրանք կշարունակեն ներգրավված մնալ ծրագրային գործընթացներում և ապագա Շահառուների խորհորդը դրանից միայն կշահի: Այդ առումով, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել հատկապես նրանց, ովքեր ծրագրի իրականացման ընթացքում բարձրացրել են և հետամուտ են եղել մի շարք բարդ խնդիրների լուծմանը, ինչպիսին են, օրինակ, շահերի բախման խնդիրը, բնապահպանական հարցերը և այլն:

ՀՄՀ-Հայաստանը կարևոր նպատակներ ունի դրված իր առջև. հարյուրավոր կիլոմետր գյուղական ճանապարհների վերականգնում, մայր ջրանցքների, ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցում, և այլն, ինչպես նաև՝ անհատ ֆերմերների հետ աշխատանք, ինչը կօգնի բարելավել նրանց կյանքը: Այս կարգի ծրագրի համար այս ամենին հասնելն անհնարին կլինի միմիայն տեխնիկական անձնակազմի միջոցով: Կրկին, շնորհակալություն հայտնելով մեր ՇԽ գործընկերներին, ես ուզում եմ կոչ անել բոլորիս, ուժերի ներածին չափով աջակցել ծրագրի իրականացման և Հայաստանում գյուղական աղքատության կրճատման գործին:

ՀՄՀ-Հայաստան

Երևան

Սեպտեմբերի 17, 2008թ